

23. Վաստ. 169), ջաման (Մտթ. ԻԳ, 23. Գոշ՝ Առկ. 49), պղպեղ սպիտակ ու սև (Դաւ. 169. Վաստ. 121), եւ այլ շատեր՝ յայտնիք հին մատենագրութեան մէջ, որոց մանր թուարկութեամբ չէի ուզեր հոս երկրորդ Հայրուսակ մը կամ Վաստակոց Գիրք մը կազմել: — Բայց չենք կարող առանձինն ու չղարձնել հանրածանօթ աղիւն, որ սովորաբար «յերկրէ» կ'ելնէր (Յճխ. 83), իրեն բնական շտեմարան ունենալով բարձր Հայոց մէջ (Խոր. 607). եւ կը բաժնուէր «ընտանի աղ եւ կողբացի» (Վաստ. 99, 106), վերջինս՝ ոսկեղարու լեզուին համեմիչ Եզնկայ ծննդավայրէն. եւ որ ծանօթ է արդէն է դարէն ալ, ուր Եզր կ'թղ. Հերակղ կայսերէն ընդունեցաւ «պարզեւ գաղն կողբայ» (Սեր. 159): Շտեմարանի մէջ պահուած աղը կը լինէր «գոիճ», այն է հատորածեւ, կամ «լեւսած» (Ալաւ. Գ): Հոս պատրաստ էր դարձեալ մեղրը (Խոր. 608), գազպեւ կամ գազպեւն՝ որ կ'իջնէր ի Տուրուբերան (անդ) եւ ի Տարօն (Չեն. 49): Կթեղէնները՝ կոգի (Ծննդ. ԺԸ, 8) կամ իշղ (Ես, Է, 15, 22), որ է կարագը. սեր (Մժբ. 371. Ալաւ. Բ), պսնիք (Յոր. Ժ, 10. Որբ. 335) կամ մսձառակ (Ա. Թագ. ԺԷ, 18), եւ մածոն՝ որ իւր անունն Յունաց ալ տուած էր ըստ Մագիս-